Հ

ՀԱՄԱԶԱՍՊ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ.— Այս իշխանը կը յիշուի Ա. Նաստաս վրդ.ի (Է. դար) վասն վանորէից Հայոց որ յերուսաղէմ գրուածքին մէջ, այսպէս. «երանելւոյն Անաստասայ Հայոց վարդապետի՝ գրեալ զանուանս վանորէիցն երուսաղէմի. ի խնդրոյ իշխանին Համազասպայ կամսարականի Պահլաւունւոյ, որ կամէր գնալ յերուսաղէմ, որ և գնաց իսկ. և արժանացաւ աստուածակոխ սուրբ տեղեացն՝ ընդ որս չրջեցաւ Տէրն մեր Յս. Քս. ի մարդանալն իւրում. եւ ի հայրապետացն երուսաղէմի թափեաց զՀայոց վանորայսն...» (Հայապատում, էջ 227—29. նաեւ Շիրակ, էջ 5)։

ՀԱՄԱԶԱՍՊ ՎՐԴ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, ԲԱՂԻՇԵՑԻ.— Մբ. Ծ. 1866ին, Ձռ. 1892ին, ՏՓ. (1920—22), ՏՑ. (1912—13). Մատակարար 1915ին, Մատենադարանապետ 1923ին, ՏՑՊ. 1925ին, անդամ Տն. Ժողովի եւ ժամօրհնող 1925ին, Բ. անդամ ՏՑՊ. 1927ին։

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՄԻՐԱՑ (ՍԱՐԲԱՖ), ՍԻՍԱՆՑԻ.— Որդի մհտ. Գրիգորի, 1740ին իր ուխտաւորութեան ժամանակ Ս. Յակոբի վանքին կը նուիրէ Ֆնէլ և ադամանդակուռ ոսկի սկիհ մը հետեւեալ յիշատակարանով. «Յիշատակէ ոսկի սկիհս Ս. Երուսաղէմ վանս Ս. Յակոբայ որ եդ յիշատակ յԵգիպտոսի զարպխանէի սարրաֆ Սիսանցի յարգելի ազնիւ Համբարձումամիրայն վասն հոգւոյ կողակցի ննջեցեալ Թագուհի խաթունին եւ համայն կենդանեաց եւ ննջեցելոց հոգւոյն. ի թուին Հայոց ՌՃՁԹ (= 1740) Փետր. Գ.» (Ցուց. Պ.)։

1818ին ալ յիշեալ ամիրային տիկնոջ՝ հանգուցեալ Թագուհիին յիշատակին համար իր ազգականները Ս. Յակոբի կը նըուիրեն կենաց փայտ պարունակող արծաթ և ոսկեզօծ խաչոր ճաճանչ մը հետեւեալ յիշատակարանով. «Զմշկածագու գիւղէն Սիսանցի մհտ. Գրիգորի որդի Համբարձումի Աղայի կենակից հանգուցեալ Թագուհի հանըմին հոգւոյն համար յիշատակ որ ետ ի քաղաքն Սաղիմայ հոյակապ Սրբոյն Յակոբայ եկեղեցւոյն ՌՄԿԷ